



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՊԱՆ.” ԴՈՒԿ • ԺԸ • 16 •

ՀԱՏՈՐ ԺԵ.


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1886

ԹԻԻ 10

ՓԱՐՈՍՔ

Այս պատկերը կը ցուցնէ Պէլ Բոք անուն փարոսը, որ աշխարհիս ամենէն հռչակաւոր փարոսներէն մին է: Շինուած է Գերմանական ուկրանային մէջ Ժայռի մը վրայ, Սկովտիոյ ծովեզրէն իբր 11 մղոն հեռի: Այս Ժայռը թէպէտ երբեմն ջրէն դուրս կը գտնուի, սակայն երբեմն կը թաղուի 12 ոտք ջրոյ ներքեւ, երբ ծովուն մակընթացութիւնն ըլլայ բարձր: Որովհետեւ փարոսը ալեաց ուժգին բռնութեան նշաւակ կ'ըլլայ, հարկ էր որ շատ զօրաւոր և հաստատուն ըլլար: Այս փարոսին յատակագիծն հանեց հռչակաւոր երկրաշարժը, բոպերթ Սթիֆընսըն, որոյ հայրը ճորձ Սթիֆընսըն հնարին եղաւ շոգեկառքի: Սթիֆընսըն սկսաւ շինել յիշեալ փարոսը 1807ին և աւարտեց 3 տարիէն: Եւ այսպէս երեք չորրորդ դարէ հետէ կը կանգնի այն, և մէկ գիշեր մը անդամ, անոր լայն որ ջրէն քաջ 100 ոտնաչափ բարձր է, թերացած չէ իմացունել նաւաւորներուն թէ անոր ներքեւ կը գտնուի վտանգաւոր Ժայռ մը:

Այս փարոսն է մին հարիւրաւորներէն որ կը գտնուին Մեծին Բրիտանիոյ ծովեզրերը: Միացեալ Նահանգք ունին աւելի քան 600 փարոս իւրեանց ծովեզրայ վրայ: Զանոնք պահելու համար ծախք կ'ըլլայ տարին աւելի քան 400,000 լիրա: Թուրքիոյ պետութիւնն ունի ընդարձակ ծովեզր որուն վրայ կը գտնուին շատ փարոսներ, թէպէտ անոնց ճիշդ թիւը ծանօթ չէ մեզ: Իւրաքանչիւր փարոսի լայն ունի մասնաւոր յատկութիւն որով նաւաւարք կը ճանչնան զայն: Ա-



ՊԵՆ ԲՈՔ ՓԱՐՈՍԸ

մանց լայն է հաստատուն, և այլոքը՝ կը թաւալի, այնպէս որ փոփոխակի կ'երևին և աներևոյթ կ'ըլլան: Ոմանք կու տան ճերմակ լոյս, այլք՝ կարմիր, և ուրիշներ՝ շարունակ կը փոփոխին մէկ գոյնէն ուրիշ գոյնի: Եւ երբ կը պատահի այնպիսի թանճք մատակուղ որ լոյս չկրնայ երևիլ փարոսներէն ոմանց մէջ, սուլելու ձայն կը հանուի և կամ դանդաղ կը հնչեցուի մեքենայից միջոցաւ, այնպէս որ նաւաւարայ սկանջները վտանգի իմացունեն անոնց երբ անոնց աշտընները չեն կրնար իմացունել:

ՏԵՐՈՋԸ ԿԱՆԹԵՂԸ

Ձրէտ կը հանէր ստուըններէն իւր կոշիկները և գուրպանները և կը պատրաստուէր երթալ պառկել: Կոշիկները թաց էին, և անոր ստից մասները բարբրովին թրջած: Եթէ անոնք կարող ըլլային խօսել, պիտի ըսէին,

“Դուն թրջեցիր զմեզ, դուն ըրիր զայս: Դուն սուտ խօսեցար, որ ըսիր թէ պիտի չքալէիր ջրին մէջէն:”

Ո՛հ, ի՛նչ գեղեցիկ վտակ է այն, գպրոցին այնքան մտա, որ ունի սիրուն քարէ աստիճաններ, այնպիսի գեղեցիկ փարքիկ կենդանիներ կան հոն որ կը շրջին ջրին երեսները, այնպիսի հրապուրիչ աղմուկ՝ որ մարդ կը հրապուրուի մէջը մանեւ: Ինչո՞ւ համար քաղաքին մէկ ուրիշ կողմը չգտնուիր այն՝ որպէս զի գպրոցական փարքիկ աղայք չփորձուէին մանեւ անոր մէջ:

Ձրէտ նեւեց իւր կոշիկները և գուրպանները մահճակալին ներքեւ. ըսաւ իւր աղօթքը առանց յիշելու խօսած սուտը և մտաւ անկողին:

“Ես գիտեմ թէ սուտ մը խօսեցայ վառակին վրայով, բայց չեմ կարծեր թէ պիտի խորհիմ անոր վրայ,” ըսաւ ինքն իրեն, և մինչ կը ջանար միտքն

ուրիշ նիւթոյ վրայ դարձունել, քունը տարաւ :

Երազին մէջ տեսաւ որ դեղեցիկ հրեշտակ մը կը կանգնէր իւր անկողնոյն քով ձեռքը բռնած պայծառ լուսով կանթեղ մը : «Այս է Տէրօ՛ջը կանթեղը», ըսաւ հրեշտակը, «եկած եմ քննել բոլոր մեղքերը զորս փոքր տղայք ծածկած են իրենց սիրտերուն մէջ և չեն խոստովանիր : Այս կանթեղը ուղղակի կը ծագէ անոնց վրայ :»

Այն ատեն Ֆրէտի սիրտը բոլորովին լեցուեցաւ լուսով, և հոն գանուեցաւ անոր խօսած սուտը որ չէր ներուած և չէր խոստովանուած :

«Շատ ցաւալի բան է այս», ըսաւ հրեշտակը : «Բարի Տէրը կը սիրէ զնա և պատրաստ է ներել մեղքը եթէ խոստովանի զայն : Տէրը շատ կը վշտանայ երբ փոքրիկ Ֆրէտ կը ծածկէ իւր մեղքը.» և կանթեղը շատ պայծառութեամբ կը փայլէր և մեղքը կ'երևէր շատ սև :

«Այլ յուսամ», շարունակեց հրեշտակը, «թէ հիմա այս փոքր տղան գիտէ թէ չկրնար ծածկել իւր սուտն այլ ևս, և պիտի խնդրէ Տէրօ՛յմէ ներել անոր :»


Ֆրէտ արթնցաւ վեր ցատկելով, ծնկան վրայ եկաւ և խոստովանեցաւ իւր մեղքը : Գնաց իւր գիշերանոցով իւր մօր սենեակը, և մինչ կը փաթթէր իւր բազուկն անոր պարանոցին շուրջը և կը պատմէր իրեն պատահած բանը, խոստացաւ թէ Աստուծոյ օղնութեամբը այլ ևս պիտի չխօսի սուտ :

ԲԻԹՔԸՐՆ ԿՂԶԻ

Հարաւային Խաղաղական օվկիանոսին մէջ գտնուող այս փոքր կղզւոյն պատմութիւնը շատ հետաքրքրական է : Կղզին դանուեցաւ 1767ին ձեռամբ Անգղիացի նաւորդաց և կոչուեցաւ Բիթքըրն գեոաստի նաւաստւոյ մը անունէն, վասն զի կղզին նախ նա տեսաւ կայմին վերի ծայրէն : Երբ գտնուեցաւ էր անմարդարձակ, թէպէտ տեսնուեցան նշաններ որ կը ցու-

ցնէին թէ կանխաւ մարդիկ բնակած էին հոն :

1789ին Պոնթի տնուն Անգղիական նաւուն նաւաստեաց մէկ մասն ապստամբեցան նաւուն հրամանատարին դէմ, և դրին զնա անոր էլլաւաթիւնը ճանչցող նաւաստեաց հետ



ՊՈՒՆԹԻ ԾՈՅՑ

բաց նաւակի մը մէջ տարով անոնց քիչ մը պաշար : Զարմանալի էր որ անոնք ապահովապէս ճանապարհորդելէ ետքը օվկիանոսին վրայ հարկուոր մղաներով՝ հասան մարդարձակ



ՅՈՒ ԱՏԱՄԹԻ ՏՈՒՆՑ

կղզի մը : Նոյն միջոցին ապրտամբ նաւաստիք նաւեցին դէպ ի թահիթի կղզին, ուր անոնցմէ ամենք թողուցին նաւը : Մնացողները որ էին 8 Անգղիացիք և 6 կղզեցիք, նաւեցին դէպ ի Բիթքըրն կղզին առնելով իրենց հետ 12 թահիթիցի կիներ :

Խորտակեցին նաւը որպէս զի անյայտ ըլլար իրենց հետքը և կը համարէին զիրենք ապահով պատժէ : Բայց մեղքը ջնջեց այս փոքրիկ խումբ

բին երջանկութիւնը : Այլ մարդիկը կուտեցան իրարու հետ և սպաննեցին զիրար մինչև որ անոնց հոն հասնելէն 10 տարի ետքը անոնցմէ մէկ մարդ միայն մնաց ողջ : Այս մարդն էր ճոն Ատամս, որ բնաւ գացած չէր դպրոց թէպէտ գիտէր քիչ մը կարդալ : Գտնելով զինք միայնակ թահիթիցի կանանց և 20 անհայր տղայոց հետ, զգաց թէ ինչ պատասխանատու դերք մը ունէր : Կղզւոյն մէջ գրաւուած մի միայն գիրքն էր Աստուածաշունչ մը և աղօթագիրք մը մէկտեղ կազմուած : ճոն Ատամս սկսաւ կարդալ զայն և աղօթել : Տղայոց սորվեցուց կարդալ և գրել, և առաւօտ և երեկոյ կրժսւորվէր զանոնք և աղօթք կ'ընէր, նաև Կիրակի օրերը կրօնական պաշտօն կը կատարէր անոնց հետ :

Եւ ոչ մի Անգղիական նաւ այցելեց այն կղզեաց մինչև վերու յիշեալ ապստամբութենէն 23 տարի ետքը : Այն ատեն յառաջ եկաւ կղզիէն նաւակ մը որոյ մէջ կը գտնուէին երկու երիտասարդներ, որք լաւ Անգղիերէնով խնդրեցին նաւուն մէջ զանուորներէն չուան մը նետել իրենց : Զուանով քաշուելով առնուեցան նաւը, և հրաւիրուեցան ճաշել : Երիտասարդները ոտքի վրայ ելան և գոհութիւն տուին ուտելու սկսելէ առաջ :

Անգղիացի նաւաստիք գտան որ կղզւոյն բնակիչները հաղած էին ծառոց կեղևներէն շինուած հանդերձ, և կը կաղմէին երջանիկ հասարակութիւն մը մարուր բարոյականով :

Տասներկու տարի ետքն էր որ ուրիշ Անգղիացի նաւ մի ևս այցելեց կղզին : Բայց այն տասներկու տարուան միջոցին պալենա օրացող Ամերիկեան նաւ մը հանդիպեցաւ հոն, և անոր նաւորդաց մին որ էր բարեպաշտ մարդ մը, այնչափ զմայլեցաւ բնակչաց վարմունքին վրայ որ մնաց կղզին և եղաւ անոնց դպրոցի վարժապետ :

Ատամս մեռաւ 1829 ին, բայց կը զեցուց ուրիշ առաջնորդ մը ելաւ, որ էր Մը. Կոպս : Սա Անգղիա կը դառնար Զիլիէ ուր ծառայած էր

իրև. ծովային սպայ Անդրիական Նաւատորմին, բայց ըստով Բիթքըն կղզույն բարի բնակչաց վրայ, որոնց երթայ հոն: Ամուսնացաւ Տեղակալ Գրիսթիլի, ապստամբաց զլխաւորին, թոռներէն աղջկան մը հետ, և եղաւ քարոզիչ, վարժապետ և բժիշկ այն փոքրիկ հասարակութեան, որոյ ծառայութիւն ըրաւ Յ6 տարի մինչև մահը որ պատահեցաւ ասկէ երկու տարի առաջ:

Կղզույն բնակչաց թիւը 1836 ին հասած էր 194 ի, և խորհուրեաց թէ կղզին փոքր պիտի դարանոնց: Վասն որոյ Անդրիական կառավարութիւնը փոխադրեց զանոնք Նորֆոլկ կղզին: Անոնցմէ վեց բնամիւր 40 անձերով շատ կարանաւորով իրենց հայրենիքը շուտով վերադարձան Բիթքըն, և վերջին տեղեկութիւններէ կ'իմացուի թէ անոնց թիւը դարձեալ հասած է 103 ի:

Անոնք շատ բնմաներ ընդունած են Անդրիայէ և Ամերիկայէ: Վերջորին թագուհին իւր կողմանէ ընծայեց անոնց երգեհոն մը եկեղեցւոյ մէջ գործածուելու համար: Կ'ըսուի թէ նշանաւոր կերպով ընտիր կ'երգեն:

Հոս դրուած երեք պատկերաց առաջինը կը ցուցնէ Պոուլթի ծոցը, որ է կղզւոյն զլխաւոր նաւահանգիստը: Երկրորդը՝ ճոն Ասամսի տունը, և երրորդը՝ չէնքը որ կը գործածուի իրև եկեղեցի և դպրոց:

Կղզին ունի միայն 2 1/2 միլոն երկայնութիւն և 1 միլոն լայնութիւն:

դաշեց անոր որ չառնու իւր փոքրիկ գաւաթը և զրգալը. և մարդն ընդունեց անոր ինդիքը: Գողը յետոյ դաւաւեցաւ և բանա գրուեցաւ: Երբ բանան էր, շատ աղաչեց որպէս զի տեսութիւն մը ընէր այն փոքրիկ աղջկան հետ. և անոր ծնողքը զիմնաւով թէ մարդը անգթութեամբ վարուած չէր իւր գողութեան մէջ, աւելն տարին մանկիկը տեսուելու անոր հետ բանահին մէջ: Գողը թերևս այնքան աղբուեցաւ անմեղ մանկան քաղցրիկ խօսքերէն որքան պիտի չարդուէր շատ մը քարոզներէ:

Ժամանակէ մը ետքը ընծայ մը եկաւ փոքրիկ աղջկան այն «պատուոյ տէր» մարդէն որոյ ասուն մանելու սիրելի եղանակն էր պատահանէն քան թէ դռնէն մտնել:

տարին դաշեցով փայտաւոր՝ կ'իման, և սակայն երբ կուգայ անոնց հայրը տուն, և կը ցուցնէ զայն անոնց, տըղաքը կ'ըսեն թէ չաեսան զայն անկէ առաջ, թէպէտ թերևս քսան անգամ անցած դարձած էին անոր վրայէն: Ի՞նչ է այս բանին պատճառը: Կարծեմ միտքն է որ չէ տեսած և չիշէր: Այս աղայք ու չարութիւն չեն տար, և շատ ցաւալի է որ այսպէս կ'ընեն: Երբեմն ու չարութիւն չընելու և անհոգութեան այս ունակութիւնն այնպէս հաստատուած կ'ըլլայ որ վնասուց պատճառ կ'ըլլայ անոնց բոլոր կենաց մէջ, պատճառ կ'ըլլայ անոնց ժամանակէն ժամեր կորսուելուն, և նեղութիւն է ամէն մարդու որ կ'ապրին կամ առնչութիւն ունին անոնց հետ:



ԵՆՈՂՆԵՆԻ ԵՒ ԳՊՈՐԻ ՇԵՊԵՐ

ՏԵՍՏԵՆԼՈՒ ԵՐԿՈՒ ԿԵՐՊ

Եթէ մարդ մը ըսէ տղու մը կամ աղջկան մը որ ունի պայծառ աչուքներ, բայց լուսոյ և միտն մէջ, թէ կոյր են, անոնք անմիջապէս պիտի ըսէին, «Ինչու համար կոյր ըլլամ, ո՞չ, ես կը տեսնեմ ամէն բան իմ շորս կողմն»: Բայց ձենէ յոյժ շատեր չեն տեսներ իրօք: Ես տեսած եմ պայծառ աչուքներ ունեցող աղջիկներ որ կ'անցնէին իրենց հանդերձին վրայէն որ ինկած էր տախտակամաճին վրայ, և երբ կ'ըսուէր անոնց թէ անցան անոնց վրայէն, կ'ըսէին, «Ո՛հ չաեսայ զայն»: Տեսած եմ նաև զանոնք մինչ կը փնտռէին դարակին կամ սեղանին վրայ գիւրք կամ մատնոյ կամ թաշկինակ, և կ'ըսէին թէ չկան հոն, և ուրիշ մէկը որ կը նայէր անոնցմէ անմիջապէս ետքը, կը գտնէր զանոնք, և կ'ըսէին, «Իրաւ որ չաեսայ զանոնք»: Կան տղայք որ ճամբուն վրայ իրենց

Մը. Պիւրը իւր վրայ կ'ընէ հետեւեալ պատմութիւնը.

«Ես բնաւ տեսած չեմ և ոչ զօր որ ընէր բան մը և դիտած և տեսած չըլլամ թէ ինչպէս կ'ընէր զայն, վասն զի չէր կրնար ըսուիլ թէ ես պէտք պիտի չունենայի որ մը ընել զայն: Անգամ մը երբ կ'անցնէի ընդարձակ դաշտէ մը, ձիս սկսաւ կաղալ: Բարեբաղդապէս ճամբուս վրայ հանդիպեցաւ դարբնի մը խանութ, բայց դարբնը չէր գտնուեր հոն: Հարցուցի

տան տիկնոջ թէ կուտար ինձ թոյլ վառել կրակ և շինել ձիուն պայտը: Պատասխանեց տիկնոջ թէ կրնայի, եթէ կարող էի ընել: Ուստի վառեցի կրակը, դիւ անոր մէջ պայտը մինչև որ կարմրեցաւ, ծաւելի զայն յարմար ցունելու համար ձիուս ոտքին, կարեցի ձիուն եղունգները, և դարձուցի որբեցի զամբուուն ծայրերը ճարտարութեամբ ինչպէս տեսած էի դարբններուն ընելը, այնպէս որ զմտնէն ձիուն ոտքին մէջ, և պայտերը զարկի ձիուն ոտքին: Յաջորդ իջեանիս ուղղակի գացի դարբնի մը և ըսի անոր որ այս պայտը շիտակ դնէ ձիուս ոտքին: Նայեցաւ ձիուն ոտքին վրայ և տուաւ ինձ դովեաս մը որոյ նման էր բէք չեմ ընդունած բոլոր կենացս մէջ: Ըսաւ ինձ թէ, եթէ ես դրամ էի այդ պայտը, աւելի լաւ կ'ընէի եթէ դարբնութեան պարապէի կենացս բոլոր օրերուն մէջ: Արդ՝ ես բնաւ կարող պիտի չըլլայի ընել զայն եթէ նայած և տեսած չըլլայի թէ ինչպէս կ'ընէին ուրիշները:»

ԲԱՋ ՓՈՒՐԻԿ ԱՂՁԻԿ ՄԸ

Լսած եմ պատմութիւն մը, թէ փոքրիկ աղջիկ մը ազատեց իւր հիւանդ մայրը գողի մը տունը մտնելէն յառաջ զայու ստեղծմէն և անհանգրստութենէն: Աղջիկն էր քաղցրաբարոյ և անմեղ էակ մը: Գիշերը լսելով ձայն մը, աներկիւղ իջաւ տանդղէն վար և գտաւ որ ճաշի սենեկին պատահանը բաց էր և սենեկին մէջ կար մարդ մը: Հարցուց մարդուն թէ ինչ կ'ուզէր: Գողը որ կը թուի թէ քիչ մը զուարճախօս էր, պատասխանեց թէ ինքն էր պատուոյ տէր մարդ և թէ իւր տուն մը մտնելու սիրելի եղանակն էր պատահանէն մտնել ներս փոխանակ դռնէն մտնելը: Թէ շատ ուրախ պիտի ըլլար թէ թոյլ տար իրեն փոխ առնուիլ անոնց տան մէջ դրուուած արծաթեղէնները: Աղջիկն ըսաւ որ ձայն չհանէ, վասն զի մայրիկը հիւանդ էր, և թէ պիտի տար անոր ինչ որ կրնար: Բերան անոր բոլոր արծաթեղէնները զորս կարող եղած էր գտնել, բայց մասնաւորապէս ա.

ՆՈՐ ԹՈՒՂԹ ՄԸ ԳԱՐՁՈՒՆԵԼ

Հարրի Ռայլս կ'ըսէ թէ ինք նոր թուղթ մը դարձուցած է : վարժապետը կը կարծէ և նորա մայրը դիտէ թէ նա դարձուցած է թուղթը : Տը-դաք , Հարրիի նախկին ընկերները , կը խնդան քիչ մը և կ'ըսեն , « Բիչ մը համբերեցէք և պիտի տեսնէք » : Եւ թիչ ըրած է Հարրի . եռանդեամբ ձեռք զարկած է իւր դպրոցի դուր-ծերուն , դարձուցած է իւր կռնակը սրիկայ տղայոց , և կ'ըսէ անոնց այ-րաբար , երբ անոնք կը հրաւիրեն զնա որպէս զի խաղայ անոնց հետ առջի անպիտան խաղերը , « Տղայք , ես չեմ կրնար ընկերանալ ձեզ այդ բանին մէջ » :

Հարրի տան մէջ տարբեր տղայ մը եղած է : Նա այլ ևս չնեղեր իւր մայրը ինքզինքով դուրս փողոցն ելլելու թող-տուած ինչ իրկուները , այլ ևս չգո-ցեր դուռն ուժղին երբ անոր թող-չարտիր իւր ուղածն ընել , այլ ևս չցուցներ խոտու գէմք և ոչ դանդաղ շարժում՝ երբ բան մը կը հրամայուի անոր որ ընէ :

Եւ Հարրիի վարքը փոխուեցաւ այս կերպով . հայելի մը դրուեցաւ անոր աչաց առջև , անոր մէջ տեսաւ նա զինք անձնատէր , ինքնահաւան և կա-մապաշտ տղայ մը . ըսել է կործանման ճամբուն վրայ : Այս երևոյթը վախ-ցուց զՀարրի , և պէտք էր որ վախ-ցունէր , Չգոցեց իւր աչուքները ինչպէս պիտի գոցէին ուրիշ տղայք , այլ նայե-ցաւ հայելոյն վրայ բաւական երկար ժամանակ մինչև որ տեսաւ թէ ինք արագ կ'առնուր Սասանայի որդւոց նմանութիւնը , և ըսաւ . « Այսպէս չը-լար . ես պէտք է որ ըլլամ Աստուծոյ որդւոց մին » :

Հարրի շուտով հասկցաւ թէ կարող չէր փոխել իւր չար ճամբաներէն մին անգամ , վասն որոյ ստիպուեցաւ Աս-տուծոյ յանձնել զինք որպէս զի ընէր այն փոփոխութիւնն անոր մէջ : Եւ յիրաւի մեծ փոփոխութիւն է այն : Հարրի « աղէկ բաժինն ընտրեց » :

Կ'ուզէ՞ս դուն ալ , սիրելի տղայ , կ'ուզէ՞ս դուն ալ , սիրելի աղջիկ , ընտրել « այն աղէկ բաժինը » :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՏԱԿ ՄԸ

Հովիւ մը անգամ մը հաստատելու համար իւր շան ճարպիկութիւնը , որ պառկած էր տան մէջ կրակին առջև , ուր մենք կը խօսակցեինք , ըսաւ ինձ , ուրիշ բանի մը վրայ խօսուած միջո-ցին , « կարծեմ , կովերը փաթաթէս » :

նեղուն արար մտած են , թէպէտ դիտմամբ չընչտեց այս բառերուն վրայ , և ըսաւ զանոնք հանդարտ և անասար-բեր կերպով : Շունը որ կ'երևէր ի քուն , անմիջապէս վեր ցատկեց և նետուե-լով բաց պատուհանէ մը դուրս՝ մա-ղըցեց տան հողէ երդիքէն վեր , որմէ կրնար տեսնել փաթաթէսի արար : Յետոյ շունը շտանելով հոն կովերը , վաղեց և նայեցաւ աղարակին բակին մէջ ուր էին անոնք : Եւ տեսնելով թէ ամէն բան ըստ կարգին է , ետ եկաւ տուն :

Բիչ մը ետքը հովիւն ըսաւ դարձեալ նոյն խօսքը , և շունը դարձեալ զնայ նայել , բայց երբ երրորդ անգամ հո-վիւն ըսաւ այն խօսքը , երաւ շունը , կը շարժէր իւր պոչը , կը նայէր իւր տիրոջ երեսը այնպիսի միմտական ձևով մը որ իբր թէ կը հարցնէր թէ ստոյգ է ըսածը . և մենք չկրցինք բռնել մեր ծիծաղը : Ասոր վրայ կա-մաց մը միմտալով զնայ պառկեցաւ իւր աաքուկ անկիւնին մէջ զբացում-ները վերադրեալ կերպով մը իբր թէ միտքը դնելով այլևս չըլլալ խաղալիկ :

ՔԱՆԻՓՈՐՆԻՈՑ ՄՈՂԷՍ ՄԸ

Քանի մը հետաքրքրաշարժ պարա-գաներ կան ճէքոյ կառուած մողէանե-րուն մէջ , կ'ըսէ Քալիֆօրնիայի բնա-խօս մը : « Հաս կայ հատ մը մեռած , որ կը կոչուի տերեւած և պոչով ճէքոյ : կը տեսնէք որ անոր պոչը ուռած է մօտ այն տեղոյն ուր կը փակչի մարմ-նայն , և կ'առնու ձև տերեւոյ կամ նետի , և ասիէ առած է կենդանին իւր ա-նունը : Արդ՝ երբ փոքրիկ կենդանին կը հալածուի , կը տեսնես որ կ'երթայ կը փաթթուի ծառի ոտի մը և վեր կը բարձրացունէ տերեւած հետա-քրքրաշարժ պոչը : Այս է բոլորը զոր դու կը տեսնես , և բնականապէս կը կարծես թէ բուն իսկ ծառին մէկ մասն է այն : Բայց այս մողէան ունի ուրիշ նշանաւոր կերպ մի ևս փախչե-լու : Համարինք թէ դու ջանացած ես փրցունել տերեւը : Կենդանին բիրա կերպով կը նետուի գետին , և կ'ոտա-նու ժայռերուն մէջ ուր կը գրաւէ բաղէներէն ոմանց ուշադրութիւնը որք յարածամ կը թռչտին այն կող-մերը : Անմիջապէս կը հալածուի ա-նոնցմէ մէկէն , թռչունը կը մօտենայ , և ի վերջոյ կը յարձակի իւր սրտին ներ կ'երևին , անոնցմէ մին կը հեռա-նայ և միւսը վեր և վար կը ցատկըտէ օդին մէջ և դեանին վրայ շատ ճար-

պիկ կերպով , այնպէս որ թռչունը ապշած կը կենայ և կը նայի : Նոյն մի-ջոցին բուն մողէսը կը փախչի , միւսը որ անոր պոչն է և ոչ ուրիշ բան , կը դադարի շարժելէ : Կը տեսնէք որ ճէքոն ունի սա յատկութիւնը որ կը նետէ իւր պոչը երբ կ'իջնայ գծուա-լու թեան մէջ , և մինչ հարածոյին ու-շադրութիւնը կ'ամփոփի անոր փրթած անդամին վրայ , բուն կենդանին կը թողու կը փախչի :

Բայց պիտի ըսես թերևս թէ մա-ղէսը կը կորսնցունէ իւր պոչը : Միայն կարճ ժամանակ մը կը մնայ այն ա-ռանց պոչի : Դարձեալ կ'աճի անոր պոչը , և բաւական հետաքրքրաշարժ բան է որ երբեմն երկու պոչ կ'ելլէ մէկին տեղը :

ԳԱՒԱԹԻՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ՕՅԸ

Հին հեթանոսի մը վրայ կայ պատա-մութիւն մը թէ շինեց զտրմանայի գաւաթ մը : Երբ անոր մէջ գինի կը լեցունէին , կ'երևէր ուրիշ գաւաթ-ներու նման , մինչև որ զայն խմող ծա-րառի անձը չկատկեց թէ խաղ մը կայ , կը պարպէ դայն , և անա կը տեսնէ իւր առջև օձ մը դալարած դա-ւաթին տակը , բոցալաւ աչուքներով և ցցուած ժանիքներով իբր թէ պատ-րաստ յարձակել իւր սրտին վրայ : Ճիշդ այսպէս է փճակն այնպիսեաց որ անձ-նատուր են սգ ելից ըմպելեաց : Թերևս ի սկզբան հաճելի դայ գինին , բայց ի վերջոյ օձը կ'ելլէ յերևան :

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԷՋ ԱՌԱԿԸ

Table with 2 columns: Verse number and text. Verse 16: 9, 11, 1, 25, 2, 14, 27, եր Թահրայ որդւոց մին . Verse 2: 21, 24, 12, 28, 4, եր իստ հեղ մարդ մը . Verse 22: 21, 7, 20, է կենսապահել ինչ . Verse 26: 10, 15, 25, 20, 6, 12, «Յետու կը սերէր» . Verse 2: 25, 5, 8, 19, 6, 4, եր ա-շակերտ մը . Verse 5: 10, 18, 20, 3, 13, եր աղքատաց անդամիկներուն փրկելը . Verse 17: 23, 1, 1, գրեթե են .

Կ. Պոլիս 8ՈՎԱԹՓ ՀԱՅԿԱԶՆ Սոյն հանդուկն մէջ կայ տառասեալ մը զոր տղայոց կը թողուք գտնել :

Ստեփաննի Միտիանայի ընկերութեան կողմէն , Իմաստէր Զ. ԿԻՐԵ Փոխ-Խմբագիր Զ. ՊԱՐՆԸՄ Ֆինանսըրը Երևանի Գրական Խան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴԱԿԻՍ Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՅՈՐ ՊՅՈՒՆՅԱՆ